

## ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ա.Ռ. Ավետիսյան, ԵՊՀ

Համացանցային ՁԼՄ-ների առաջացմամբ 20-21-րդ դարերի սահմանագծին, որպես լրագրողական գործունեության ինքնուրույն ոլորտ, ձևավորվեց համացանցային լրագրությունը:



Ոլորտի մասնագետների կողմից այն սահմանվել է որպես «որակապես նոր մշակութային և քաղաքակրթական երևույթ, իրականության տեղեկատվական պատկերների ձևավորման և ներկայացման գործունեություն, որոնց կրողներ կարող են լինել ոչ միայն բառը, այլ նաև նկարը, լուսանկարը, ֆիլմը, տեսանյութը, ձայնը, կայք-էջը, այսինքն՝ ցանկացած օբյեկտ, որը կարող է հանդես գալ որպես տեղեկատվության կրող կամ տեքստ՝ բառի լայն նշանակությամբ»<sup>1</sup>, որպես «քաղաքացիական լրագրություն կամ քաղաքացիների գործողություն, որոնք ակտիվ դերակատարում ունեն լուրերի և տեղեկատվության հավաքման, փոխանցման, վերլուծության և տարածման գործընթացում»<sup>2</sup> որպես «Սեդիայի մասնագետներ, որոնք ուղղակիորեն պատասխանատու են համացանցի լրատվական բովանդակության համար (լինի դա գոյություն ունեցող տպագիր կամ հեռարձակվող ՁԼՄ, թե անկախ առցանց լրատվություն)»<sup>3</sup>:

Համացանցային լրագրության առաջացմանը զուգահեռ արդիական է դարձել համացանցային լրագրողների կրթության կազմակերպման հիմնախնդիրները:

Այսօր Հայաստանում լրագրողական կրթություն իրականացնում են մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններ, մասնավորապես՝ Երևանի պետական համալսարանը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական, Հայ-ռուսական (սլավոնական), Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանները, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Նշված հաստատություններից բացի մագիստրոսական ծրագրեր իրականացնում են նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և Կովկասյան ինստիտուտը:<sup>4</sup>

Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում ժուռնալիստիկան ներառված է «Հայ գրականության, դասավանդման մեթոդիկայի և լրագրության» ամբիոնի կրթական ծրագրերում (<http://gspi.am/>), իսկ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում իրականացվում է լրագրողների պատրաստման բակալավրի ծրագիր (<http://www.vsu.am/>): Պետական բուհերի՝ մյուս մարզերի մասնաճյուղերում այս ուղղությունը բացակայում է:

Ընդգծենք, որ դեռևս 2004թ. Ա. Սկրտչյանն անդրադարձել է լրագրողների կրթության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությանը՝ նշելով քայլերի հետևյալ համակազմը՝ միանալիության (connectivity) ավելացում (նկատի ունենալով տեխնիկական բազայի համալրումն ու վերազինումը), համայնքային հասանելիություն (access), մասնագիտական կարողությունների կատարելագործում, էլեկտրոնային բովանդակության կատարելագործում:<sup>5</sup>

Լրագրողական կրթության բարեփոխման անհրաժեշտությունը բարձրաձայնելու հաջորդ կարևոր քայլը եղել է 2009թ. նոյեմբերին ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի

<sup>1</sup>Калмыков А., Коханова Л. Интернет-журналистика: учебное пособие. Москва, ЮНИТИ-ДАНА 2005 (электронная книга), с. 5 (с. 383).

<sup>2</sup> Bowman S., Willis C., We media: how audiences are shaping the future of news and information, Reston, The media center at The American Press Institute 2003, pp. 9 (pp. 64).

<sup>3</sup> Domingo D., Inventing online journalism (Development of the Internet as e news medium in four Catalan online newsrooms), Tarragona, Maig 2006, pp. 22 (pp. 563).

<sup>4</sup> Մարտիրոսյան Ն., Ժուռնալիստիկական կրթությունը Հայաստանում. ձեռքբերումներ և հեռանկարներ: Ժուռնալիստիկա (Տեսության և պատմության հարցեր), պրակ Ի, Երևան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 10 (222 էջ):

<sup>5</sup> Սկրտչյան Ա., Նոր տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները և ժուռնալիստիկան: Ատենախոսություն բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, Երևան, 2004, էջ 185-192 (212 էջ):

10-ամյակին նվիրված «Լրագրողական կրթության ապագան Հայաստանում» թեմայով գիտա-ժողովը, որի շուրջ համախմբվել էին այս ոլորտում ընդգրկված բոլոր մասնագետները: Գիտա-ժողովի շրջանակներում անդրադարձներ եղան նաև նոր՝ համացանցային լրագրողի մասնագիտությանը:

Այսպես, մատնանշվեց 2007թ. ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում «Մուլտիմեդիա» կենտրոնի բացումը և դրա շնորհիվ «Ժուռնալիստիկային ժուռնալիստիկա» առարկայի գործնական հանձնարարությունների կատարման միջոցով ուսանողների համար մուլտիմեդիայի կիրառման հմտությունները յուրացնելու և տիրապետելու հնարավորության ստեղծումը,<sup>6</sup> լրագրողական կրթության և նոր տեղեկատվամիջոցների փոխհարաբերությունների համատեքստում հին մեդիայից նորի անցման հրատապությունը,<sup>7</sup> ժուռնալիստական նոր մասնագիտացումների ստեղծման անհրաժեշտությունը՝ պայմանավորված տեղեկատվական զարգացման ազդեցությամբ մեդիաոլորտի կրած փոփոխություններով:<sup>8</sup>

Այժմ, նշված գիտաժողովից 4-5 տարի անց, Հայաստանում նոր մեդիայի համար աշխատող լրագրողների պատրաստման գործընթացն ու բնորոշը միտումներն ուրվագծված են ստորև (տե՛ս աղյուսակ 1):

Ստացվում է, որ Հայաստանում խորացված լրագրողական կրթություն է իրականացնում պետական բուհերից 5-ը, իսկ համացանցային լրագրողներ պատրաստում են երկուսը միայն՝ Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական և Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանները, այն էլ միայն մագիստրոսական կրթական ծրագրերով: Ընդ որում, ՀՌՀ-ում «Մուլտիմեդիա լրագրության» մասնագիտացումը բացվել է 2013թ., իսկ 2015թ. ՀՌՀ-ն տվել է առաջին շրջանավարտները:

Աղյուսակում ներկայացված են մասնագիտական այն դասընթացները, որոնք շոշափում են համացանցում աշխատող լրագրողներ նախապատրաստելու խնդիրները: Հատկանշական է, որ ինչպես այս, այնպես էլ պրոֆեսորադասախոսական անձնակազմում մեդիաոլորտի մասնագետների հետ համագործակցության առումով ևս ԵՊՀ-ն և ՀՌՀ-ն առաջատար են: Երևանի պետական համալսարանում նույնպես սկսել են տեղեկատվական միջավայրի նոր պահանջներին համապատասխան քայլեր ձեռնարկել: ՀՊՄՀ-ում և Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտում առաջին սահմանափակվում են օնլայն լրագրության վերաբերյալ 1-2 դասընթացով:

Համացանցային լրագրողների պատրաստման հայաստանյան փորձառության մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու համար անցկացվել է հարցաթերթային ուսումնասիրություն Երևանի պետական համալսարանի, Լեզվահասարակագիտական համալսարանի և Մանկավարժական համալսարանի լրագրության տարբեր բաժիններում սովորող բակալավրիատի 4-րդ կուրսի և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների հետ: Ընդհանուր թվով ուսանողներին տրվել է 150 հարցաթերթիկ, որոնցից վերադարձվել է 141-ը, բոլորը լրացված են եղել և ենթարկվել են մշակման: Հարցաթերթում ընդգրկված 9 հարցերից ստորև բերված է 3 ոլորտների վերաբերյալ ուսանողների պատասխանների վերլուծությունը՝ կապված առցանց լրագրությունը ներառող դասընթացների, ուսանողների մասնագիտական հմտությունների և ապագա մասնագիտական գործունեության ոլորտի ընտրության հետ:

<sup>6</sup> Հովսեփյան Մ., Ժամանակակից մեդիակրթությունը և հայաստանյան հեռուստաոլորտը: Ժուռնալիստիկա (Տեսության և պատմության հարցեր), պրակ Ի, Երևան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 59 (222 էջ):

<sup>7</sup> Բայալյան Հ., Նոր մեդիա և ժուռնալիստական կրթություն: Ժուռնալիստիկա (Տեսության և պատմության հարցեր), պրակ Ի, Երևան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 21-27 (222 էջ):

<sup>8</sup> Ավետիսյան Ա., Ոչ ֆորմալ կրթության մեթոդների կիրառումը ժուռնալիստիկայում: Ժուռնալիստիկա (Տեսության և պատմության հարցեր), պրակ Ի, Երևան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 69 (222 էջ):



Աղյուսակ 1


Հայաստանի պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում  
 լրացրողական կրթության իրականացման առանձնահատկությունները

№	Ուսումնական հաստատության անվանումը	Լրացրողական մասնագիտացումները	Բակալավրի կրթական ծրագրում ընդգրկված դասընթացներ՝ կապված հասնացանցային լրացրողական հետ	Մագիստրատական կրթական ծրագրում ընդգրկված դասընթացներ՝ կապված հասնացանցային լրացրողական հետ
1	ԵՊՀ Մաճուրի տեխնոլոգիական և պատմության ամբիոն	Լրացրողական հատկանիշները կապված չեն հարմարակցություն հետ  Միջազգային և բաղադրական ժողովրդագրության ամբիոն Հարմարակցություն, մեդիա և հասարակություն	ՉԼՄ տեխնիկա և տեխնոլոգիա Հարմարակցական տեխն. և համակարգչային կազմեր Տեղեկատվական ամբիոններ Տեղեկատվական պատմագիտություն Գլոբալ տեղեկատվագիտություն Աղյուսակ լրացրողական	Տեղ. և հարթոր. տեխնոլոգիաներ և հասարակ. Նոր և այլընտրանքային մեդիա: Էթիկական և իրավական խնդիրներ Բլոգ և բլոգերների հասարակություն PR-ը հասնացանցում
2	ՀՊՀ Հեռուստառադիոլրացրողական ամբիոն	Հեռուստառադիոլրացրողական և on-line մանուլ  Լրացրողական	-	Տեղեկ և հարթոր. տեխնոլոգիաները մասնագ. որդրում ժամ. ՉԼՄ-ներ գարգացման միտումներ և ինտերնետային լրացրողական
3	ԵՊՀ «Միջազգային լրացրողական» գիտատնտեսական կենտրոն	Հեռուստառադիոլրացրողական և on-line մանուլ  Հեռուստառադիոլրացրողական Նոր մեդիա / new media	Գ-ոլագր. տպագիր և էլեկտրոնային մանուլ, Գ-ոլագր. և ծրագրավորում  Տպագիր և էլեկտրոնային մանուլ ՉԼՄ-ների տիպարանական առանձնահատկությունները Նորագույն ՏՏ-ները լրացրողական Տպագիր և էլեկտրոնային մանուլի դեպքում	Նոր մեդիա գործիքներ Շանսանակալից մեդիաշուկան Տեղեկատվական տեխնոլոգիաները Լրատվական հոսքերի ստեղծման տեխնոլոգիաներ
4	ՀՈՀ Լրացրողական ամբիոն	Լրացրողական  Մուլտիմեդիա լրացրողական	-	Աղյուսակ լրացրողական, Մեդիալոգիկա, PR պատմություն և մեթոդաբանություն, Տեղեկատվական ամբիոններ Նոր և այլընտրանքային մեդիայի էթիկական և իրավական խնդիրներ, Մեդիահարթորություններ, WEB կառավարում և մոնիթինգ, Ինտերակտիվ մեդիահարթորություններ (տեղեկատվական ցանցերը, բլոգերությունը, հասնացանցում), Տեսանկյունի տեսություն և պրակտիկա, Լուսանկյունի տեսություն, օպերատորական վարկետիզացիոն, Ելույթի մշակումը, վերաշարադրումը և փոխանցումը ՉԼՄ-ներում
5	ՖԿՀՊԻ Մարզական լրացրողական և շախմատի ամբիոն	Մարզական լրացրողական	-	Արդի տեխնոլոգիա և ժողովրդագրություն

Այսպես, ԵՊՀ-ում հարցված 61 ուսանող առցանց լրագրությանն առնչվող մասնագիտական առարկաները նշել է հետևյալ հարաբերակցությամբ.

Գծագիր 1

**Երևանի պետական համալսարանի ուսանողների կողմից համացանցային լրագրությանն առնչվող դասընթացների առանձնացումը**




Այսինքն՝ բակալավրիատում համացանցային լրատվության հետ կապված 2 առարկա է առանձնացվել՝ «Ժուռնալիստի վարպետություն» և «Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ և ժուռնալիստիկա»: Իսկ մագիստրատուրայում, ակնհայտորեն համապատասխան առարկաներն ավելի շատ են, չնայած, ի զարմանս մեզ, անգամ «օնլայն լրագրություն» առարկան, որն ուղղակիորեն վերաբերում է խնդրո առարկա թեմային, հարցվածների միայն 1,6%-ն էր նշել:

Վ.Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի 39 ուսանողների հետազոտության տվյալները ներկայացված են գծագրում.

Գծագիր 2

**Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի ուսանողների կողմից համացանցային լրագրությանն առնչվող դասընթացների առանձնացումը**




Այստեղ հատկապես ուշագրավ է այն հանգամանքը, որ հարցված ուսանողների գրեթե կեսը չի կարողանում մտաբերել դասավանդվող այն առարկաները, որոնք առնչվում են համացանցային լրագրությանը:

Մանկավարժական համալսարանում հարցմանը մասնակցել է 41 ուսանողներ, որոնցից 12-ը՝ ռադիոլրագրություն և 29-ը՝ հեռուստալրագրություն մասնագիտությամբ: Ստացված տվյալներն այսպիսին են.

Գծագիր 3


Խ.Արոլյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողների կողմից համացանցային լրագրության առնչվող դասընթացների առանձնացումը



Մեզ համար ուսանողների կրթական ոլորտում կարևորություն ներկայացնող հաջորդ ոլորտը ուսումնառության ընթացքում ձեռք բերված այն կարողություններն ու հմտություններին էին, որոնք հետագայում պետք է կիրառվեն համացանցային լրատվամիջոցներում աշխատելու համար: Առանձնացվել է հմտությունների 5 մակարդակ: Ըստ բուհերի՝ դրանց տիրապետման տոկոսային ցուցանիշներն արտահայտված են գծապատկերում.

Գծագիր 4


Հարցված ուսանողների կողմից համացանցում աշխատելու 5 հմտությունների տիրապետման մակարդակը



Ի վերջո, այն հարցին, թե լրագրության որ ոլորտում են պատրաստվում աշխատել բուհն ավարտելուց հետո, 3 բուհերի ուսանողները պատասխանել են հետևյալ կերպ.

Գծագիր 5

Հարցված ուսանողների կողմից հետազոտման մասնագիտական գործունեության ոլորտի ընտրությունը



Այսպիսով, համացանցում աշխատող լրագրողների կադրային պատրաստման հայկական շուկայի խնդիրներին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ:

Ուսումնասիրելով հայկական բուհերում լրագրողների պատրաստման ավանդույթները և արդի վիճակը, մենք ստիպված ենք արձանագրել, որ որոշակի անհամապատասխանություն կա մեդիաշուկայի պահանջների և կադրերի պատրաստման մոտեցումների միջև: Այսօր հայկական համացանցային լրատվական շուկայում գործում են 200-ից ավելի կայքեր՝ համացանցային հեռուստատեսություններ, ռադիոընկերություններ, տպագիր պարբերականների առցանց տարբերակներ և զուտ համացանցային լրատվամիջոցներ: Մինչդեռ, համացանցային լրագրողներ պատրաստվում են միայն երկու բուհում, այն էլ մագիստրոսական կրթական ծրագրով: Հետևաբար, Հայաստանում լրագրողական կրթության **առաջին առանձնահատկությունը աշխատաշուկայի պահանջների և կրթության անհամապատասխանությունն է:** Այդ խնդրի հաղթահարումը հնարավոր կլինի բուհերում համապատասխան մասնագիտացման կրթական ծրագրերի և համացանցում լրագրողական գործունեության հմտությունների և կարողությունների ձևավորմանն ուղղված դասընթացների ներմուծման միջոցով:

Մյուս կարևոր կողմը բուհերի՝ ժամանակակից տեխնիկական հագեցվածությունն է, ինչպես նաև մասնագիտական պրակտիկաները համացանցային լրատվամիջոցների խմբագրություններում անցկացնելու հնարավորությունները:

Խնդիրներից հաջորդը համացանցային լրագրության պրակտիկ ոլորտում աշխատող մասնագետների թույլ կապն է կրթական համակարգի հետ: Մինչդեռ, երբ գործ ունենք համացանցի պես մեդիամիջավայրի հետ, որտեղ փոփոխությունները երբեմն ավելի արագ են տեղի ունենում, քան մասնագետները կհասցեն տեսական մոտեցումներ մշակել և ներդնել, ուսանողների մշտական կապը տարբեր առցանց խմբագրությունների հետ խիստ արդիական է դառնում:

Ամփոփելով նշենք, որ Հայաստանում համացանցային լրագրողների պատրաստման ինստիտուտը դեռ նոր է ձևավորվում, սակայն այն ժամանակակից լրատվական շուկայի ամենալուրջ խնդիրներից մեկը կարող է համարվել, քանի որ հիմա արդեն համացանցային ՉԼՄ-ների ազդեցության ոլորտը, կարելի է ասել, համապետական է, ժամանակի հրամայականն է,

ըրպեսզի դրանցում լինեն համապատասխան պատրաստում անցած, տեխնիկական և մասնագիտական հմտություններ ստացած, որոտի կարգավորման իրավական և էթիկական առանձնահատկություններին տիրապետող մասնագետներ:

Резюме

Особенности профессионального образования интернет-журналистов в Армении

А.Р. Аветисян, ЕГУ



В результате появления Интернет-СМИ на рубеже 20-21 веков образовалась интернет-журналистика в качестве независимой и отдельной области журналистской деятельности.

Наряду с появлением интернет-журналистики стали актуальными вопросы, связанные с организацией образования журналистов, пишущих статьи для данной сферы.

Сегодня журналистское образование в Армении обеспечивается рядом высших учебных заведений, в то время как интернет-журналистов готовят только в двух университетах, причем данные программы доступны исключительно в магистратуре. Изучив традиции и сложившуюся ситуацию вокруг подготовки интернет-журналистов в армянских вузах, мы вынуждены констатировать, что есть некоторые расхождения между требованиями медиа рынка и подходами к профессиональной подготовке кадров. Эта проблема может быть преодолена внедрением в вузы соответствующих специализированных учебных программ, посредством которых будущие специалисты обретут необходимые навыки и знания.

Summary

The Features of Professional Education of the Internet Journalists in Armenia

A.R. Avetisyan, YSU

The emergence of the online media at the turn of 20-21 centuries formed the online journalism as an independent field of journalism.

Along with the formation of the Internet journalism issues related to the organization of the education for journalists who write articles for this sector became relevant.

Today, journalistic education in Armenia is provided by a number of higher education institutions, while Internet journalists are trained only by two universities, and these programs are available exclusively in the magistracy. After studying the traditions and the situation around the preparation of the online journalists at the Armenian universities, we have to admit that there is some discrepancy between the demands of the media market and approaches to vocational training. This problem can be overcome by the introduction of the relevant special training programs at the universities, by which future specialists will gain the necessary skills and knowledge.